ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույնով հաստատում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝ «Լույսեր» ՓԲԸ (այսուհետ՝ Թողարկող) 2024թ. - ի առաջին եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է «Լույսեր» ՓԲԸ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների 2024թ.- ի առաջին եռամսյակի զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը, որոնց հետ առնչվում է «Լույսեր» ՓԲԸ-ն:

Գրիգոր Չիչոյան	Տնօրեն		10/04/2024
Արամ Տիտանյան	Գլխավոր Հաշվապահ		10/04/2024

«Լույսեր»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 ԹՎԱԿԱՆ, Առաջին եռամսյակ

«Լույսեր» ՓԲԸ

2024թ. 1-ին եռամսյակային հաշվետվություն

Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է ակտիվ գործունեություն, շարունակվել է շինարարական աշխատանքների ավարտական փուլը և հաճախորդների որակյալ սպասարկումը: Հիմնվելով ընկերության ցուցաբերած արդյունքների վրա՝ կայացվել են հեռանկարային զարգացման որոշումներ՝ ընկերության գործունեության ընդլայնման, նոր նախագծերի մշակման ուղղությամբ:

<u>Հաշվեկշռային հիմնական ցուցանիշներ</u>

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ (31.03.24թ.) «Լույսեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) **ակտիվները** կազմել են 26.22 մլրդ ՀՀ դրամ, նախորդ հաշվետու ժամանակաշրջանից ապահովելով 5% աճ: Բարձրացումը հիմնականում պայմանավորված է կառուցապատողի հատուկ հաշվի, առևտրական և դեբիտորական պարտքերի և ընկերության պաշարների աճի հետ՝ նախորդ կիսամյակի հետ համեմատելով: Այսպիսով, ընկերության ակտիվների գերակշիռ մասը բաժին է ընկնում հաճախորդներից ստացված մուտքերին և պաշարներին, որոնք 31.03.2024թ. դրությամբ միասին կազմել են ակտիվների 84-ը:

Ընկերության **դրամական միջոցները** (բանկային հաշիվների տնօրինման համար ազատ մնացորդներ) 31.03.2024թ. դրությամբ կազմել են 67 մլն ՀՀ դրամ:

Ակտիվների աճին զուգընթաց կիսամյակի ընթացքում աճել են նաև Ընկերության **պարտավորությունները**՝ հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ կազմելով 24.44 մլրդ ՀՀ դրամ: Պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է պարտատոմսերի, ինչպես նաև գնորդներից ընթացիկ կանխավճարների աճի հետ:

Ինչպես ակտիվները և պարտավորությունները, **սեփական կապիտալը** նույնպես որոշակի աճ է գրանցել՝ 31.03.2024թ. դրությամբ կազմելով 1.78 մլրդ ՀՀ դրամ:

Դրամական Հոսքեր

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում դրամական հոսքերում նկատվել են որոշակի փոփոխություններ:

Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքերը եռամսյակի ընթացքում կազմել են -136 մլն ՀՀ դրամ: Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ գործառնական գործունեության զգալի մաս են կազմել մատակարարներին և աշխատակիցներին վճարումները, ինչն էլ իր մեծ ազդեցությունն է ունեցել ընդհանուր գործառնական գործունեությունից հոսքերի բացասական ցուցանիշի վրա:

Ֆինանսավորման գործունեությունից դրամական զուտ հոսքերը 2024թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում կազմել են -141.23 մլրդ ՀՀ դրամ. բացասական ցուցանիշը հիմնականում պայմանավորված է փոխառության և վարկի մարման, ինչպես նաև պարտատոմսերի և վարկերի գծով վճարված տոկոսների հետ:

Ներդրումային գործունեության հոսքերը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կազմել են 16.16 մլն ՀՀ դրամ, պայմանավորված կառուցապատողի հատուկ հաշվում միջոցների ստացված տոկոսի հետ:

Հետագա զարգացման նկարագիր

Առաջիկա ժամանակահատվածում «Լույսեր» ՓԲԸ-ի հիմնական առաքելությունն է «Լույսեր» բնակելի համալիրի բարեհաջող ավարտը և հանձնումը. հաճախորդների, մատակարարների և այլ շահագրգիռ անձանց նկատմամբ պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարումը և որակյալ ծառայությունների մատուցումը:

Ընկերությունը մշտապես ուսումնասիրում է շուկան, սպառողների կարիքները և պահանջները՝ հետագա նախագծերի մշակման նպատակով: Այսպես, «Լույսեր» բնակելի նախագծից բացի, Ընկերությունը նախատեսում է իրագործել «Լույսեր» բազմաֆունկցիոնալ հասարակական կենտրոնի նախագիծը, որը մոտ 20 հազար քմ. ընդհանուր տարածքով շինություն է՝ ապահովված տարբեր ենթակառուցվածքներով:

«Լույսեր» ՓԲԸ

2024թ.

ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևան-2024

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	**Ծան.**	**31.03.2024թ.**
Ակտիվներ		
Հիմնական միջոցներ		7,712
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ		-
Ներդրումային գույք		432,200
Հետաձգված հարկային ակտիվներ		-
Կառուցապատողի հատուկ հաշիվ		7,969,826
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**8,409,738**
Պաշարներ		14,004,762
Տրված կանխավճարներ		929,657
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր		2,811,788
Դրամական միջոցներ		67,001
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**17,813,208**
Ընդամենը ակտիվներ		**26,222,946**
Սեփական կապիտալ և պարտավորություններ		
Կանոնադրական կապիտալ		582,310
Կուտակված շահույթ		1,199,745
Ընդամենը սեփական կապիտալ		**1,782,055**
Վարձակալության գծով պարտավորություններ		-
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ		2,224,546
Երկարաժամկետ պարտատոմսեր		2,391,123
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**4,615,669**
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր		86,080
Շահութահարկի գծով պարտավորություն		25
Վարձակալության գծով պարտավորություններ		-
Ընթացիկ կանխավճարներ գնորդներից		17,660,290
Երկարաժամկետ վարկերի կարճաժամկետ մաս		399,366
Երկարաժամկետ պարտատոմսերի գծով տոկոս		1,679,461
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**19,825,222**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**26,222,946**

Գլխավոր տնօրեն — Գլխավոր հաշվապահ

Գրիգոր Չիչոյան — Արամ Տիտանյան

10 ապրիլի 2024 թ

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծան.	01.01-31.03.2024թ.
Հասույթ		-
Տոկոսային եկամուտներ կառուցապատողի հատուկ հաշվում առկա միջոցների գծով		16,166
Այլ եկամուտներ		-
Վարչական և այլ ընդհանուր ծախսեր		(48,457)
Ֆինանսական ծախսեր		-
Փոխարժեքային տարբերություններից օգուտ (կորուստ)		-
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		**(32,291)**
Շահութահարկի գծով եկամուտ (ծախս)		5,812
Շահույթ (վնաս) հարկումից հետո		**(26,479)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		**(26,479)**

Գլխավոր տնօրեն

Գրիգոր Չիչոյան

Գլխավոր հաշվապահ

Արամ Տիտանյան

10 ապրիլ 2024 թ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	01.01-31.03.2024թ.
Գործառնական գործունեությունից հոսքեր	
Հաճախորդներից ստացված մուտքեր	89,552
Մուտքեր պետբյուջեից՝ մատակարարներին վճարված ԱԱՀ-ի վերադարձ	-
Այլ մուտքեր	-
Վճարումներ մատակարարներին և նրանց անունից	(191,535)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(28,108)
Վճարված հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ՝ բացի շահութահարկից	(5,000)
Վճարված շահութահարկ	-
Այլ ելքեր	(980)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	**(136,071)**
Ներդրումային գործունեությունից հոսքեր	
Հիմնական միջոցների ձեռքբերումից ելքեր	-
Միջոցների սառեցում կառուցապատողի հատուկ հաշվում	-
Կառուցապատողի հատուկ հաշվում միջոցների գծով ստացված տոկոս	16,166
Ռեպոյի գծով տոկոսների ստացում	-
Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր	**16,166**
Ֆինանսավորման գործունեությունից հոսքեր	
Պարտատոմսերի տեղաբաշխում	712,264
Բանկային վարկի ստացում	375,361
Փոխառության ստացում	-
Փոխառության և վարկի մարում	(1,178,034)
Վճարված տոկոսներ՝ վարկերի ,պարտ. և փոխառությունների գծով	(50,817)
Վարձակալության գծով պարտավորության մայր գումարի և տոկոսների վճարում	-
Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	**(141,226)**
Ընդամենը դրամական զուտ հոսքեր	**(261,131)**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	-
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի 2024թ	**8,297,958**
Դրամական միջոցների մնացորդն առ 31 մարտի 2024թ	**8,036,827**

Գլխավոր տնօրեն — Գլխավոր հաշվապահ

Գրիգոր Չիչոյան — Արամ Տիտանյան

10 ապրիլ 2024 թ